ՆԱԽԱԳԻԾ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
## ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«---» հոկտեմբերի 2014թ. N ----Ա

ՈՐՈՇՈՒՄ

ԼԵՎՈՆ ԳՐԻԳՈՐԻ ԱՐՈՆՅԱՆԻՆ
«ԵՐԵՎԱՆԻ ՊԱՏՎԱՎՈՐ ՔԱՂԱՔԱՑԻ» ԿՈՉՈՒՄ ՇՆՈՐՀԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 35-րդ կետի դրույթներով և հիմք ընդունելով Երևանի քաղաքապետի առաջարկությունը.

**Երևան քաղաքի ավագանին որոշում է.**

Երևան քաղաքի 2796-րդ տարեդարձի առթիվ, շախմատի բնագավառում ունեցած մեծ վաստակի, ներդրած նշանակալի ավանդի և շախմատի զարգացումը խթանելու համար միջազգային գրոսմայստեր, հանրահայտ շախմատիստ Լևոն Գրիգորի Արոնյանին շնորհել «Երևանի պատվավոր քաղաքացի» կոչում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ.ՄԱՐԳԱՐՅԱՆ

## ՏԵՂԵԿԱՆՔ-ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

## «ԼԵՎՈՆ ԳՐԻԳՈՐԻ ԱՐՈՆՅԱՆԻՆ «ԵՐԵՎԱՆԻ ՊԱՏՎԱՎՈՐ ՔԱՂԱՔԱՑԻ» ԿՈՉՈՒՄ ՇՆՈՐՀԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Լևոն Գրիգորի Արոնյանը ծնվել է 1982 թվականի հոկտեմբերի 6-ին Երևանում:

Հանրահայտ շախմատիստ Լևոն Արոնյանը 1994 թվականին Սեզեդ քաղաքում դարձել է մինչև 12 տարեկանների աշխարհի չեմպիոն, որի համար նրան շնորհվել է ՖԻԴԵ-ի վարպետի կոչում:

1995 թվականին Փարիզում Լ. Արոնյանը հաղթել է մինչև 14 տարեկանների արագ շախմատի աշխարհի առաջնությունում: Այնուհետև, 1996 թվականին հաղթել է Իսպանիայում կայացած մինչև 14 տարեկանների աշխարհի առաջնությունում, նույն թվականին դարձել է միջազգային վարպետ:

1997 թվականին նա նվաճել է Կասպարովի գավաթը:

1999 թվականին Լ. Արոնյանը դարձել է Հայաստանի փոխչեմպիոն և ընդգրկվել է Հայաստանի հավաքականի կազմում, որը Բաթումում դարձել է Եվրոպայի չեմպիոն:

2000 թվականին հանրահայտ շախմատիստ Լևոն Գրիգորի Արոնյանին շնորհվել է գրոսմայստերի կոչում:

2001 թվականին Հայաստանում, այնուհետև՝ 2002 թ.-ին՝ Հնդկաստանում Լ. Արոնյանը նվաճել է մինչև 20 տարեկանների աշխարհի չեմպիոնի կոչումը:

2004 թվականին Իտալիա Կալվիա քաղաքում կայացած համաշխարհային օլիմպիադայում Հայաստանի հավաքականի կազմում նա նվաճել է թիմային բրոնզե մեդալ:

2005 թվականին հայ գրոսմայստեր Լևոն Արոնյանը Խանտի Մանսիյսկում նվաճել է ՖԻԴԵ-ի աշխարհի գավաթը:

2006 թվականին Վլադիմիր Հակոբյանի, Կարեն Ասրյանի, Սմբատ Լպուտյանի, Գաբրիել Սարգսյանի և Արտաշես Մինասյանի հետ Լ. Արոնյանը դարձել է Թուրինի 37-րդ համաշխարհային օլիմպիադայի հաղթող: Գերմանիայի Մայնց քաղաքում Լ. Արոնյանը նվաճել է «Շախմատ-960» -ի /Ֆիշերի շախմատ/ աշխարհի չեմպիոնի կոչումը:

2008 թվականին Վեյկ ան Զեի ավանդական մրցաշարում Լ. Արոնյանը լրացուցիչ ցուցանիշներով ճանաչվել է հաղթող:

Ֆրանսիայի Նիցցա քաղաքում կայացած «կույր» և արագ շախմատի ավանդական մրցաշարում ճանաչվել է հաղթող և հռչակվել ամբողջ մրցաշարի բացարձակ հաղթող: Նույն թվականին Հայաստանի հավաքականը Դրեզդենում դարձել է 38-րդ համաշխարհային օլիմպիադայի չեմպիոն:

2010 թվականին Լևոն Արոնյանը Մոսկվայում դարձել է Միխայիլ Տալի հուշամրցաշարի հաղթող, այնուհետև՝ դարձել է կայծակնային շախմատի աշխարհի չեմպիոն:

2011 թվականին Չինաստանի Նինբո քաղաքում Հայաստանի հավաքականի կազմում Լևոն Արոնյանը դարձել է աշխարհի թիմային առաջնության հաղթող:

2012 թվականին Լ. Արոնյանը իր թիմակիցների հետ միասին երրորդ անգամ հաղթել է համաշխարհային օլիմպիադայում:

2013 թվականին Լ. Արոնյանը մասնակցել աշխարհի չեմպիոն Ալեքսանդր Ալյոխինի հուշամրցաշարին և լրացուցիչ ցուցանիշներով ճանաչվել է հաղթող:

2014 թվականին Ցյուրիխում մասնակցել է 23-րդ կարգի գերմրցաշարին, որտեղ նա դասական շախմատում զբաղեցրել է 2-րդ տեղը, արագ շախմատում՝ 3-րդ: Այդ մրցաշարում հայ գրոսմայստեր Լ. Արոնյանը իր անհատական վարկանիշը հասցրել է իր համար ռեկորդային 2830 ցուցանիշի:

Հայ անվանի շախմատիստ, գրոսմայստեր Լևոն Արոնյանը պարգևատրվել է «Մովսես Խորենացի» /2006թ./, «Հայրենիքին մատուցած ծառայությունների համար» 1-ին աստիճանի մեդալներով /2008թ./, «Սուրբ Մեսրոպ Մաշտոց» շքանշանով /2012թ./ և «Երևան» զինանշան հուշամեդալով:

2014 թվականի սեպտեմբրի 1-ի դրությամբ անհատական վարկանիշով Լևոն Գրիգորի Արոնյանը աշխարհի 2-րդ շախմատիստն է:

Ելնելով վերոգրյալից և հաշվի առնելով հայ շախմատիստ, գրոսմայստեր, 2005 թվականի աշխարհի գավաթակիր, Հայաստանի հավաքականի կազմում 37-րդ, 38-րդ և 40-րդ համաշխարհային օլիմպիադաների հաղթող, Վեյկ ան Զեի մրցաշարի քառակի հաղթող, 2009 թվականի արագ շախմատի աշխարհի չեմպիոն Լևոն Գրիգորի Արոնյանի շախմատի բնագավառում ունեցած մեծ վաստակը և ներդրած նշանակալի ավանդը՝ առաջարկվում է Լևոն Արոնյանին շնորհել «Երևան քաղաքի պատվավոր քաղաքացի» կոչում և Երևան քաղաքի ավագանու քննարկմանն է ներկայացվում սույն որոշման նախագիծը:

**ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ** **Տ.ՄԱՐԳԱՐՅԱՆ**

## ՏԵՂԵԿԱՆՔ

## «ԼԵՎՈՆ ԳՐԻԳՈՐԻ ԱՐՈՆՅԱՆԻՆ «ԵՐԵՎԱՆԻ ՊԱՏՎԱՎՈՐ ՔԱՂԱՔԱՑԻ» ԿՈՉՈՒՄ ՇՆՈՐՀԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ/ԿԱՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Լևոն Գրիգորի Արոնյանին «Երևանի պատվավոր քաղաքացի» կոչում շնորհելու մասին» Երևանի ավագանու որոշման նախագծի ընդունման կապակցությամբ այլ իրավական ակտերում լրացումներ և/կամ փոփոխություններ կատարելու անհրաժեշտություն չի առաջանում:

## ՏԵՂԵԿԱՆՔ

## «ԼԵՎՈՆ ԳՐԻԳՈՐԻ ԱՐՈՆՅԱՆԻՆ «ԵՐԵՎԱՆԻ ՊԱՏՎԱՎՈՐ ՔԱՂԱՔԱՑԻ» ԿՈՉՈՒՄ ՇՆՈՐՀԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ/ԿԱՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Լևոն Գրիգորի Արոնյանին «Երևանի պատվավոր քաղաքացի» կոչում շնորհելու մասին» Երևանի ավագանու որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Երևանի բյուջեում լրացումներ եվ/կամ փոփոխություններ կատարելու անհրաժեշտություն չի առաջանում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ.ՄԱՐԳԱՐՅԱՆ